Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (19 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), երաժշտության (7 դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (7 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26- րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀում աշխատելու իրավունքը հավաստող փաստա- թուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխա- նատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթե- րի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտա- րարության հրապարակման օրվանից մինչեւ հունիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխա- տանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա հունիսի 11-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Զորակի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 83-66-41 հեռախոսահամարով: